ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԽՆԴՐԻՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ: ԲՈՒԼԻՆԳ

ԼՈՒՍԻՆԵ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի կրթության կառավարման մագիստրոս,
Լոռու մարզի Բազումի միջնակարգ դպրոցի ՄԿԱ համակարգող, Վանաձորի Քարհանյան դպրոցի ուսուցիչ
nahapetyanlusine96@gmail.com

ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
hahapet@rambler.ru

DOI: 10.54503/978-9939-1-2075-1-164

Համառոտագիր

Երկրի զարգացման կարևոր ռեսուրսներից է մարդկային ռեսուրսը: Որքան կիրթ է հասարակությունը, այնքան բարձր է այդ ռեսուրսի գործունեության արդյունավետությունը: Այդ նպատակով դեռ դպրոցական վաղ տարիքից սկսած գիտելիքների և հմտությունների ուղղությամբ ներդրումը երկրի զարգացման երաշխիքն է լինելու: Նախատեսվող ուսումնական աշխատանքը պետք է նպատակ ունենա զարգացնելու քաղաքակիրթ, նախաձեռնող, կարողունակ, ստեղծագործ, մրցունակ քաղաքացի, որը պատկերացնում է իր ապագան սեփական երկրում: Կրթությունը առաջնահերթություն է, ազգային արժեք, սոցիալ-տնտեսական առաջընթացի առանցքային գործոն. հիմնական խնդիրը կրթության որակի բարելավումն է, որը կապահովի համակարգի արդյունավետ գործունեությունը, սովորողների՝ կրթություն ստանալու հավասար հասանելիություն՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան: Երբեմն դպրոցը իր աշխատանքն արդյունավետ կազմա-կերպելու ճանապարհին առնչվում է մի շարք խոչնդոտների, որոնք ազդում են ուսուցման գործընթացի արդյունավետության վրա:

Սույն հոդվածում ուսումնասիրվում են ուսուցման արդյունավետության վրա ազդող այն գործոնները, որոնք առաջանում են դպրոցում պայմա-նավորված սովորողների ընտանիքի սոցիալական կարգավիճակով: Հաճախ ընտանիքի սոցիալական կարգավիճակը իր բացասական հետքն է թողնում սովորողի անձի ձևավորման և զարգացման վրա: Սոցիալական տարբերությունները կարող են բերել ընկերական կամ խմբային բախումների՝ բուլինգի: Սա կարևոր մի խնդիր է, որն իր բացասական հետքն է թողնում անձի զարգացման վրա:

Այս հարցի հետ կապված անելիքներ ունի դպրոցը՝ ճանաչելու և իր ուշադրության կենտրոնում պահելու նման սովորողներին:

Հոդվածում ներկայացված են այս խնդրի կարևորությունը և լուծման ուղիները, փորձ է արվում վերլուծելու դրանք, մշակելու և առաջարկելու լուծումներ, մշակելու մեխանիզմներ՝ դպրոց-ծնող կապը ամրացնելու,

սովորողների կարիքները ճանաչելու և դրանց հաղթահարման մեխանիզմները մշակելու ուղղությամբ:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ կրթության արդյունավետություն, սոցիալական կարգավիճակ, բուլինգ, ինքնահիրացում, դրդապատճառ, կանխարգելում:

PROBLEMS AT SCHOOL RELATED TO STUDENTS' SOCIAL STATUS: BULLYING

LUSINE NAHAPETYAN

International Scientific-Educational Center of the National Academy of Sciences of the RA
Department of Education Management, Master's degree student
Coordinator of Specialised Educational Support (SES)
at Bazum Secondary School, Lori Region
Teacher at Vanadzor Karhanyan School
nahapetyanlusine96@gmail.com

HAYK PETROSYAN

Doctor of Pedagogical Sciences, Professor
hahapet@rambler.ru

Abstract

One of the most essential resources for a country's development is its human resources. The more educated a society is, the higher the efficiency of its resource activities. For this purpose, investing in knowledge and skills from an early school age will be a guarantee of the country's development. The planned educational work should aim to develop a civilised, proactive, capable, creative, and competitive citizen who envisions their future in their own country. Education, being a priority, a national value, and a key factor for socio-economic progress, the main issue is improving the quality of education. This will ensure the effective functioning of the system and provide equal access to education for learners, in accordance with their aspirations and abilities. However, the school sometimes encounters several obstacles that hinder its ability to effectively organise its work, which in turn affects the effectiveness of the learning process.

This article examines the factors that affect the effectiveness of teaching in schools, particularly those related to the social status of the learners' families. Often, the social status of the family leaves a negative impact on the formation and development of the learner's personality. Social differences can lead to peer or group conflicts, such as bullying. This is a significant issue that has a negative impact on personal development.

The school has a role to play in this matter: to recognise and keep such students under its attention. The article presents the importance of this issue and explores possible solutions, attempting to analyse them, develop, and propose

effective solutions. It also focuses on developing mechanisms to strengthen the school–parent connection, recognise students' needs, and create strategies to address them.

Keywords and phrases: Education effectiveness, social status, bullying, self–realisation, motivation, prevention.

ПРОБЛЕМЫ, СВЯЗОННЫЕ С СОЦИАЛЬНЫМ СТАТУСОМ УЧАЩИХСЯ В ШКОЛЕ. БУЛЛИНГ

ЛУСИНЕ НААПЕТЯН

Магистрант управления образованием Международного
научно–образовательного центра НАН РА,
Координатор специализированной образовательной поддержки
Базумской средней школы Лорийской области,
учитель Ванадзорской школы Карханян
nahapetyanlusine96@gmail.com

ГАЙК ПЕТРОСЯН

Доктор педагогических наук, профессор
hahapet@rambler.ru

Аннотация

Человеческие ресурсы являются одним из важнейших ресурсов для развития страны. Чем образованнее общество, тем выше эффективность этого ресурса. В связи с этим инвестирование в знания и умения с раннего школьного возраста является залогом развития страны. Планируемая воспитательная работа должна быть направлена на формирование цивилизованного, инициативного, способного, креативного, конкурентноспособного гражданина, представляющего своё будущее в собственной стране. Поскольку образование является приоритетом, национальной ценностью, ключевым фактором социально–экономического прогресса, главной задачей становится повышение качества образования, что обеспечит эффективное функционирование системы, равный доступ учащихся к образованию в соответствии с их стремлениями и способностями. Но порой на пути к эффективной организации своей работы школа сталкивается с рядом препятствий, которые возникают из–за социального статуса семей учащихся. Зачастую социальный статус семьи накладывает негативный отпечаток на формирование и развитие личности обучающегося. Социальные различия могут привести к возникновению как дружеских отношений, так и групповых конфликтов, таких как травля, буллинг. Это важный вопрос, который оставляет негативный след в развитии человека. В этом направлении школе предстоит сделать многое, чтобы выявлять таких учеников и держать их в центре внимания. В статье представлена важность данной проблемы и пути её решения, сделана попытка проанализировать их, разработать и предложить решения, разработать механизмы укрепления школьно–родительских отношений, распознать потребности учащихся и

разработать механизмы их преодоления.

Ключевые слова: эффективность образования, социальный статус, буллинг, самореализация, мотивация, профилактика.

Ներածություն

Հանրակրթական դպրոցներում կրթության արդյունավետությունը կապված է մի շարք գործոններից, որոնցից մեկն էլ սովորողների ընտանիքի սոցիալական կարգավիճակն է: Սովորողների սոցիալական կարգավիճակը՝ ընտանիքի ֆինանսական վիճակը, հասարակական դիրքը, ծնողների կրթական մակարդակը, տարածքային առանձնահատկությունները, կարող է մեծ ազդեցություն ունենալ նրանց ուսումնական առաջադիմության և վարքագծի վրա:

Սոցիալապես անապահով ընտանիքի երեխաները հաճախ անտեսվում են իրենց հասակակիցների կողմից, որը ազդում է նրանց վարքագծի վրա, և սկսում են մեկուսանալ հասարակությունից, որն էլ ազդում է անձնային աճի վրա: Նման երեխաների մեջ առաջանում է վարքային և էմոցիոնալ փոփոխություններ: Երեխան կարող է դառնալ ագրեսիվ, ինքնամփոփ, ունենալ անքնություն: Երեխայի վարքը վատանում է, և շրջապատը սկսում է ավելի կոշտ արձագանքել երեխայի արարքներին, ինչն էլ բերում է վարքի բարդացմանը: Նրանց մեջ ձևավորվում է չհասկացվածության զգացողություն, որն իր հետքն է թողում ողջ կյանքի ընթացքում: Երեխաների մեջ բացասական փոփոխություններ նկատելու դեպքում իրավիճակի բարդացումը կանխելու նպատակով անհրաժեշտ է ցուցաբերել մասնագիտական մոտեցում **[10]:**

Տարբեր սոցիալական կարգավիճակներ ունեցող ընտանիքների երե-խաները կարող են հայտնվել սոցիալական համախմբման խնդիրների առաջ: Նրանք կարող են դժվարությունների հանգել ընկերական միջա-վայրում, ուսումնադաստիարակչական աշխատանքներին մասնակցելիս: Նման սովորողները կարող են զգալ իրենց տարբեր, ինչն առաջացնում է ինքնավստահության պակաս, անգամ անտարբերություն՝ դպրոցի նկատմամբ: Նրանց մեջ առաջանում են հոգեբանական դժվարություններ՝ անհանգստություն, դեպրեսիա, ինքազգացողություն կամ դպրոցից հրաժարում: Սովորողները, որոնք ապրում են անկայուն միջավայրում, կարող են նաև ցուցաբերել անառողջ վարքագիծ՝ վառ օրինակների մեջ ալկոհոլ կամ թմրանյութերի օգտագործում:

Դպրոցը պետք է ուշադրության կենտրոնում պահի նման սովորողներին՝ ապահովի համակողմանի աջակցություն՝ ինչպես ուսումնական, այնպես էլ՝ հոգեբանական: Անապահով ընտանիքների երեխաները հաճախ զրկված են անհրաժեշտ գրենական պիտույքներից, հագուստից, հեռախոսից: Երեխաները, որոնք բախվել են սոցիալական դժվարությունների, հաճախ ավելի քիչ ժամանակ ու էներգիա են տրամադրում՝ դպրոցական աշխատանքներին կամ հավաքներին, լրացուցիչ դասերին մասնակցելու համար, ինչն ազդում է նրանց առաջադիմության վրա **[7, էջ 26]:**

Այս բոլոր խնդիրները խոչընդոտում են սովորողների լիարժեք

կրթությունը և կյանքի որակը, ուստի դպրոցը պետք է տրամադրի բոլոր երեխաներին անհրաժեշտ աջակցություն՝ ապահովելու նրանց կրթական հավասար հնարավորություններ՝ անկախ սոցիալական անհավասարությունից:

ՀՀ-ի պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունը անվճար է **[9]:** Հետևաբար պետք է պետական քաղաքականությունը հանրակրթության ոլորտում առանձնահատուկ ուշադրություն դարձնի և մեխանիզմներ ստեղծի՝ այս խմբերի երեխաների համար որակյալ հանրա-կրթություն ապահովելու ուղղությամբ: Այս ամենը հաշվի առնելով՝ կարիք կա, որ նաև ուսուցիչը, պատասխանատվություն ստանձնելով, հնարավորինս հավասարության մթնոլորտ հաստատի ուսումնական միջավայրում: Ուսուցիչը դասի կազմակերպման ժամանակ պետք է ապահովի համագործակցային միջավայր, կիրառի ճկուն հմտություններ, ինչպիսիք են՝ ապրումակցումը, ինքնագիտակցումը: Ճկուն հմտությունները հնարավորություն են տալիս սահուն կերպով հարմարվելու սոցիալական միջավայրում, հաղթահարելու միջանձնային և ներանձնային տարբեր խնդիրներ **[4,էջ 11]:** Նա պետք է ընտրի դասավանդման այնպիսի հնարներ, որ ուսուցման գործընթացին ներգրավված լինեն դասարանի բոլոր սովորողները և համագործակցեն միմյանց հետ: Հաշվի առնելով, որ պետության պարտավորությունն է ապահովել կրթության իրավունքի իրացման հավասար հնարավորություններ, ներառել և ընդգրկել բոլորին՝ անկախ նրանց առանձնահատկություններից, դպրոցական ուսումը պետք է ընկալել ոչ թե իբրև ձոխություն, այլ բոլորի համար անհրաժեշտ և հասանելի գործընթաց, որում, սակայն, հնարավոր է՝ լինեն ուսուցչի և համակարգի կողմից հասցեագրում պահանջող որոշակի անառողջ մրցակցային հարաբերություններ: Այդ անառողջ մրցակցության նախադրյալներից մեկն է սոցիալական կարգավիճակի ազդեցությունը: Դասի կազմակերպման գործում, չհաշված արտաքին գործոնները, օրինակ՝ տեխնոլոգիական միջոցներ, համազգեստ, դասագրքեր և այլն, կան նաև հոգեբանական գործոններ, որոնք հարկավոր է մշտապես վերահսկել և պահել ուշադրության կենտրոնում: Այդ գործոնի օրինակները տարաբնույթ են. կան բազում դեպքեր, երբ երեխան դասի ժամանակ ոչ թե դասին է ուշադրություն դարձնում, այլ մտածում է այն աշխատանքի մասին, որ պետք է անի դասերից հետո՝ ընտանիքին օգնելու նպատակով (հաճախ նվազագույն կենցաղային պայմաններ ապահովելու համար): Եթե վերոնշյալ օրինակը վերաբերում է ընտանիքի անապահովությամբ պայմանավորված հոգեբանական գործոնին, ապա կա նաև հակառակ դրսևորումը, երբ երեխան ապահով ընտանիքից է և դասի ընթացքում, օգտվելով իր սմարթֆոնից, տարբեր խաղեր է խաղում կամ ժամանակ անցկացնում սոցիալական ցանցերում՝ մտածելով, որ կրկնուսույցի մոտ կլրացնի բացը: Այսպիսի օրինակներն շատ են: Բավականին տարածված են սոցիալական տարբեր շերտերի ընտանիքների երեխաների վարքային տարբեր դրսևորումները՝ հարաբերություններ կառուցելու, սովորելու կամ չսովորելու այլ դրդապատճառների, դպրոցի, ուսուցչի, դասընկերների նկատմամբ վերաբերմունքի առումով: Փոխհարաբերությունների տեսանկյունից դեռևս տարրական դասարաններում կարող են առաջանալ

որոշակի աշակերտական խմբավորումներ, թեպետ դրանք երբեմն նկատելի չեն: Օրինակ՝ ապահովված ընտանիքների երեխաները, մանավանդ, երբ նրանց ընտանիքները նաև ընկերական հարաբերություններ կամ բարեկամական կապեր են ձևավորել, արդեն իսկ իրենց շփման շրջանակը սահմանափակում են նախքան դպրոց գալը և հետո արդեն դպրոցում շփվում են գլխավորապես միմյանց հետ: Եթե տարրական դասարաններում խնդիրը այդքան ծայրահեղ չէ, այսինքն՝ հիմնականում առողջ հարաբերություններ են ձևավորվում բնականորեն՝ անկախ ծնողների սոցիալական կարգավիճակից, ապա միջին և ավագ դասարաններում այս հարցն ավելի սուր է արտահայտված: Սոցիալական դժվարություններին ավելանում է նաև դեռահասության ճգնաժամը: Սոցիալական տարբերությունները կարող են բերել ընկերական կամ խմբային կոնֆլիկտների՝ բուլինգի:

Բուլինգը, ի տարբերություն առօրյա բախումների, պարբերական բնույթ կրող արատավոր գործընթաց կամ իրավիճակ է, որը միտում ունի հոգեբանական և ֆիզիկական վնաս պատճառելու: Բուլինգ ենք կոչում սովորաբար այն իրավիճակը, երբ մեկ կամ մի քանի հոգի դիտավորյալ, ժամանակ առ ժամանակ կամ մշտապես ծեծում, վիրավորում, նվաստացնում կամ հետապնդում են մեկ այլ մարդու: Ի տարբերություն այլ կոնֆլիկտների՝ այն չի ենթադրում հետագայում ճնշվողի, դրական իմաստով, կոփում ուղղակի կամ անուղղակի կերպով: Հաճախակի բուլինգի ենթարկվողները տարբերվում են լավ կամ վատ սովորելով, ունեն տարբերվող արտաքին հատկանիշներ, ավելի բարձր կամ ցածր սոցիալական խավից են **[9 էջ 115]:** Բուլինգը իր տարատեսակներով և միտումներով բազմազան է: Տարբերությունը հստակ պատկերացնելու համար կարևոր է նշել, որ մի շարք բախումներ անձի զարգացման պարագայում իրենց խթանիչ դերն ունեն, սակայն բուլինգի պարագայում մենք գործ ունենք թիրախավորված ճնշման ձևի հետ, որը ինքնին դրական աճ չի ենթադրում: Միանշանակ կարող ենք ասել, որ բուլինգը բացասաբար է ազդում մարդու հոգեկան զարգացման վրա: Կան մի շարք վարքային ցուցիչներ, որոնք արտահայտվում են բռնության ենթարկվող երեխաների մոտ: Երեխային օգնելու համար առաջին և կարևոր քայլը՝ ստեղծել այնպիսի հարաբերություններ, որ երեխան խոսի, պատմի, արտահայտվի խնդրի շուրջ **[5,էջ 51]:** Բուլինգը չի սահմանափակվում զոհի և ագրեսորի դերերով: Սովորաբար բուլինգի գործընթացում առանձնացվում է չորս դեր՝ ագրեսոր, մասնակից, դիտորդ, պաշտպան: Հատկանշական է երրորդ կողմի՝ դիտորդի դերը: Սովորաբար առանց դիտորդի ներկայության բուլինգ տեղի չի ունենում: Մասնավորապես, երբ գործ ունենք ծաղր պարունակող հոգեբանական ճնշման իրավիճակի հետ, կարող ենք փաստել, որ այլ անձի ներկայությունը ճնշողի, ծաղրողի համար լինում է խիստ ցանկալի: Այդ երրորդ անձը կարող է պասիվ դիտորդի վարք դրսևորել և նպաստել տեղի ունեցողի զարգացմանը բացասական իմաստով: Բուլինգի պարճառները ևս շատ տարբեր են: Այդ պատճառներից են՝ շրջապատում ինքնահաստատվելը, «դրական» տպավորություն թողնելը, ուժեղ երևալը և այլն: Տարրական դասարաններում շատ հազվադեպ է պատահում, երբ երեխաների հարաբերություններում որևէ հոգեբանական ճնշման միտում նկատվի, բայց, այդուամենայնիվ, ճնշումը կա,

թեկուզ և առանց այդպիսի միտում ունենալու: Հաճախ ակամա ձևավորվում են նաև խմբեր, որոնք հանդես են գալիս ճնշողի դերում և բախվում մեկ այլ խմբի կամ անհատի, որոնք, այսպես կոչված, «տարբերվողի» դերում են հայտնվում և ենթարկվում ճնշման **[8,էջ 115]:**

Դպրոցը մարդու ձևավորման, սոցիալականացման և անմիջական շփման միջավայր է, որտեղ արդեն իսկ պետք է ուշադրության կենտրոնում ունենալ նմանատիպ դեպքերը և թույլ չտալ բացասական զարգացում: Ի տարբերություն տարրական դասարանների՝ միջին և ավագ դասարաններում, երբ գործ ունենք դեռահասների հետ, ագրեսիվ վարքի վտանգը մեծանում է, և, հետևաբար, այս պարագայում միտումները ևս հաճախ տարբերվում են նախորդ նշված դեպքերից: Խնդրին առավել մոտենալու և դրա կանխարգելիչ մեթոդները պատկերացնելու համար դիտարկենք բուլինգի կողմերին, որոնց սովորաբար հանդիպում ենք տվյալ դեպքում: Մի շարք հետազոտությունների հիման վրա՝ կարող ենք առանձնացնել վարքագծի դրսևորումներ և որոշ խառնվածքներ, որոնք հակում ունեն հալածող (բուլեր) դառնալու: Այսպիսով՝ այս խմբում ներառվում են այն երեխաները, հատկապես դեռահասները, որոնք հակում ունեն իշխելու, այսինքն՝ կարծում են, որ ենթարկեցնելով իրենց համադասարանցիներին կամ ընկերներին՝ կարող են ավելի հեշտ հասնել իրենց նպատակներին: Ֆիզիկապես ուժեղ սովորողները, սովորաբար ինքնահաստատման կարիքից դրդված, առավել հաճախ են դիմում բուլինգի, ճնշում գործադրելով՝ փորձում ցույց տալ իրենց առավելությունը: Դեռահասները, որոնք չափից ավելի մեծ ձգտում ունեն լինելու ուշադրության կենտրոնում, նույնպես փորձում են այդ բացը լրացնել դասընկերոջը ծաղրելով և տարբեր տեսակի ճնշումների ենթարկելով: Դյուրագրգիռ այն սովորողները, որոնք ինքնատիրապետման որոշակի խնդիրներ ունեն, նույնպես, ռիսկային խմբում են գտնվում: Այս շարքին կարելի է հեշտությամբ դասել նաև այն երեխաներին, որոնք ագրեսիվ վարք են դրսևորում ուսուցիչների կամ ծնողների հանդեպ: Հայաստանում ամենից քիչ հանդիպող վարքագծի տեսակ է զուտ հոգեբանական խնդիրներով պայմանավորված՝ բուլինգի ենթարկելը: Վերոնշյալ մի շարք վարքագծերին ուղիղ հակասող վարք ունեցող երեխաները նույնպես, տարբեր իրավիճակներից դրդված, հայտնվում են բուլերի դերում: Այս բաժանումը առավել հաճախ պատահող դեպքերը նշելու համար է, և այդպիսի ընդգծված վարքագծային բաժանում կա նաև ճնշման ենթարկվող երեխաների դեպքում **[6, էջ 51]:** Առավել հաճախ ճնշման են ենթարկվում այն սովորողները, որոնք ինքնավստահ չեն, ինքնամփոփ են, խուսափում են շփումներից և հիմնականում շփվում են ոչ իրենց հասակակիցների հետ, միջավայրում հայտնի են իրենց զգայունությամբ, մենակյացի համբավ ունեն: Սոցիալապես անապահով ընտանիքի երեխաները նույնպես ֆիզիկական բռնության զոհերի ռիսկային խմբում են: Բուլինգի պարագայում մեծ դեր ունեն նաև դիտորդները: Դիտորդ երեխաները սովորաբար վախենում են զոհ դառնալուց կամ առանձին դեպքերում զվարճալի են համարում բուլինգի տեսարանը, փորձում են չտարբերվել մնացած համադասարանցիներից և ընկերներից, փորձում են լավ հարաբերություններ ունենալ բուլերի հետ՝

վախենալով զոհ դառնալուց:

Կիբեռբուլինգի օրինակները ևս բազմազան են, և կարելի է ասել, որ չեն զիջում նախորդին թե՛ քանակապես, թե՛ իրենց թողած բացասական հետևանքներով: Դա ևս տարբեր դրդապատճառների հիման վրա զարգացող երևույթ է, որը սկսվում է առաջին հայացքից ամենաանվտանգ կատակներից և վերջանում հոգեբանական անդառնալի հետքեր թողնելով: Որպես օրինակ կարող ենք նշել տարբեր սոցիալական կայքերում որևէ երեխայի ուղղված ծաղրը, նրա լուսանկարների խեղաթյուրված տարբերակների տարածումը և այլն: Այս դեպքում կարելի է ասել, որ խնդիրը փոքր-ինչ բարդանում է, քանի որ տեղի չի ունենում անմիջապես այդ ամենը կանխարգելել փորձող ուսուցչի ներկայությամբ և տեղափոխվում է վիրտուալ դաշտ, որտեղ խմբով ավելի հաճախ ծաղրի են ենթարկում մեկին, որը կարող է և այդ ծաղրին անմիջապես չմասնակցել, սակայն հետագայում ագրեսիայի զոհ դառնալ նույն ծաղրողների կողմից **[3 էջ 65]:** Հոգեբանական թունավորումը, ճնշումը, ագրեսիան կանխելու գործում մեծ դեր ունեն ծնողները, ծնող-ուսուցիչ հարաբերությունների ճիշտ ձևավորված ինստիտուտը, բայց երբ խոսքը վերաբերում է դպրոցական միջավայրում ձևավորված բուլինգին, ապա ուսուցչի պատասխանատվությունը ավելի մեծ է: Առաջին քայլը, որ կարելի է ձեռնարկել հետագայում սրացումներից և ծայրահեղ հետևանքներից խուսափելու համար, բացահայտելու փորձն է: Այդուամենայնիվ, ուսուցչի դերն այն է, որ վստահության վրա հիմնված հարաբերություններ ստեղծելով բոլոր սովորողների հետ՝ արդեն իսկ տեղյակ լինի հնարավոր զարգացումների մասին:

Սովորողների տարիքային առանձնահատկություններով պայմանա-վորված՝ ուսուցչի հեղինակության գործոնը կարող է տարբեր լինել: Ուսուցիչների հարաբերությունները ևս ազդում են սովողների անձնային զարգացման վրա: Որպես հեղինակություն՝ ուսուցիչը հավասարակշռված վարքով և գործընկերների հանդեպ ցուցաբերած հարգանքով դրական ազդեցություն է թողնում երեխայի ձևավորման և սոցիալականացման վրա: Հատկապես տարրական դասարաններում սովորող երեխաները ընդօրինակման ճանապարհով են հարաբերություններ ձևավորում հասակակիցների հետ և արտահայտում իրենց զգացմունքները: Հիմնականում բուլինգն ունենում է իր «էպիկենտրոնը»: Դեպքերի ճնշող մեծամասնության դեպքում հալածանքը բխում է մեկ կամ երկու սովորողից **[8 էջ 15]**: Երբ արդեն որևէ սովորողի պահվածքի մեջ նկատելի են դառնում նման դրսևորումներ, հարկավոր է աննկատ կերպով հատուկ քայլեր անել իրավիճակը շտկելու համար: Հատկանշական է գեղարվեստական գրականության դրական ազդեցությունը նման իրավիճակի շտկման գործում: Ապրումակցման տեսանկյունից առավել քան օգտակար է ընտրել գրական այնպիսի ստեղծագործություն, որում շոշափվում է հալածանքի թեման: Յուրաքանչյուր տարիքային խմբի համար և յուրաքանչյուր իրավիճակի համար կարելի է ընտրել համապատասխան գրականություն: Բուլինգի հնարավորությունը նվազեցնելու և այն կանխարգելելու գործընթացում առաջնային կարևորություն է տրվում բուլերի հետ ուղղակի աշխատանքին:

Ցանկալի է կազմակերպել մի շարք միջոցառումներ, վերականգնել տարբեր գեղարվեստական գործերի բեմադրության մշակույթը՝ ներգրավելով բոլոր սովորողներին: Հաճախ բուլեր հանդիսացող երեխաներն այդ քայլին դիմում են՝ մերժված կամ անտեսված լինելու զգացումից դրդված: Նրանք փորձում են իրենց ձանձրույթը կամ անինքնավստահությունը հաղթահարել՝ շեղվելով ուսումնական գործընթացից:

Մի շարք երկրներում, որոնց թվում ԱՄՆ-ը, Նորվեգիան և այլն, արդյունավետ են համարում տարբեր միջոցներով բուլինգը որպես սոցիալական կամ անձնական արատ ներկայացնելով սովորողների ուշադրությունը հրավիրելը: Օրինակ՝ առաջարկվում է փորձել գրավոր աշխատանք հանձնարարելու տարբերակը, երբ երեխաները դասարանում կամ տանը փոքրիկ էսսեի տեսքով գրում են իրենց կարծիքը տարբեր տեսակի ճնշումների մասին՝ կախված իրենց տարիքից: Օրինակ՝ ավագ դպրոցում այդ կերպ հնարավոր է բացահայտել դիտորդներ հանդիսացող սովորողներին, որոնք մինչ այդ վախենում էին պատմել իրենց տեսածի մասին: Կարևոր է յուրաքանչյուր սովորողի պարտադիր ներգրավվածությունը տարատեսակ միջոցառումներին, ինչը թույլ կտա նրանց ինքնաարտահայտվելու. թե՛ բուլեր հանդիսացող սովորողները, թե՛ այդ ճնշման զոհերը միմյանց այլ տեսանկյունից ճանաչելու առիթ կունենան: Դա կնպաստի նրանց հարաբերությունների վերաիմաստավորմանը: Արական սեռի՝ բուլերի դեր ստանձնած սովորողների մեծամասնությունը շփոթում է ճնշում գործադրելը տղամարդկության դրսևորման հետ: Նրանց հետ ուսուցողական զրույցը կարող է անհամեմատ դրական փոփոխությունների սկիզբ լինել: Արժանանալով բուլերի վստահությանը՝ հնարավոր է նվազագույնի հասցնել բուլինգի հնարավորությունը դասարանում: Եթե սովորողը դարձել է բուլեր դասընկերոջը ուսումնական հաջողությունների համար նախանձելու պատճառով, ապա նրան պետք է այնպես ներգրավել դասապրոցեսի մեջ, որ նա խրախուսվի և հաջողություններ գրանցի: Օրինակ՝ կարելի է պարզել նրա սիրած առարկան և նախասիրությունը, խոսել նրա հետ այդ մասին, ներգրավել ծնողին այս գործընթացում: Եթե գործ ունենք վերոնշյալ օրինակի հետ, հարկ է տեղյակ պահել ծնողին այդ մասին, որպեսզի նա աշխատի երեխայի հետ այն առարկաների շուրջ, որոնք դժվար է հաղթահարում երեխան: Պետք է հաշվի առնել, որ անառողջ մրցակցությունը ևս բուլինգի տարածման առիթ է: Այդ պատճառով «լավ ու վատ սովորող» սովորողների միջև եղած կեղծ բաժանման վրա հիմնվող շեշտադրումը նույնպես ինքնին բացասական երևույթ է: Բուլինգի դրսևորումների հետ աշխատանքում չափազանց կարևոր է նաև դպրոցական անձնակազմի անդամների համագործակցությունը (դասղեկ, ուսուցիչներ, դպրոցի հոգեբան և այլն): Այն դեպքերում, երբ բուլինգի դրսևորումները տևական են դառնում, և դրանց ինտենսիվությունը խորանում է, անհրաժեշտ է ներգրավել հոգեբանի, որը մասնագիտական աջակցություն կցուցաբերի կողմերին:

Սովորողները, որոնք ունեն տարբեր սոցիալական կարգավիճակ, հաճախ օժտված են տարբեր արժեքներով, հետաքրքրություններով

կամ մոտեցումներով, ինչը կարող է ստեղծել դժվարություններ խմբի ներառման մեջ: Սրանք են այն հիմնական խնդիրները, որոնք կարող ենք նկատվել յուրաքանչյուր դպրոցում: Դպրոցը մշտապես պետք է իր ուշադրության կենտրոնում պահի սովորողներին՝ անկախ նրանց սոցիալական կարգավիճակից: Դասարանի ղեկավարները, հիմք ընդունելով իր պաշտոնական պարտականությունները, համագործակցելով ծնողների հետ, մշտական պետք է վերահսկեն սովորողներին: Դպրոց–ծնող կապը պետք է ամուր լինի և հիմնված փոխադարձ վստահության վրա: Դասղեկը, իր լիազորության սահմաններում, սովորողի ծնողների օգնությամբ կարող է տեղեկություն հավաքել նրա արտադպրոցական կենսամիջավայրի մասին:

Եզրակացություն

Հիմք ընդունելով ուսումնասիրությունների արդյունքները՝ որպես հանրակրթական դպրոցի մասնագիտացված կրթական աջակցությունների համակարգող, առաջարկում եմ սոցիալական արդարության և հավասար, անվտանգ կրթական միջավայր ստեղծելու համար կիրառել հետևյալ մոտեցումները՝

1. Դպրոցում ձևավորել անվտանգ սոցիալական միջավայր:
2. Կազմակերպել խմբային աշխատանքներ՝ միավորելով տարբեր սոցիալական կարգավիճակ ունեցող երեխաներին մեկ ընդհանուր գործի շրջանակներում: Ստեղծել համագործակցային միջավայր:
3. Ընտրել համապատասխան գրականության ցանկ՝ պարտադիր դասարանական կամ արտադասարանային ընթերցանության համար, որտեղ կշոշափվեն այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ փոխօգնության կարևորությունը, համեստությունը, հանդուրժողականությունը և այլն:
4. Բեմադրել դասարանական ներկայացումներ և դերերի բաշխումը օգտագործել որպես սոցիալական կարգավիճակի անհավասարությունից բխող ազդեցությունների շտկման միջոց:
5. Տարրական դասարաններում զրույցների նյութ ընտրելիս նախապատվությունը տալ մարդկանց հոգատարության, բարության կարևորությունը ընդգծող հեքիաթներին, ավելի մեծ տարիքի համար՝ առակներին, առասպելներին, հերոսական կենսագրություններին և այլն:
6. Համագործակցել ծնողների հետ՝ միասին իրականացնելով դպրոցին առնչվող տարաբնույթ աշխատանքներ:
7. Տարբեր միջոցառումներ կազմակերպելու միջոցով հնարավորություն ընձեռել երեխաներին՝ դրսևորելու իրենց ընդունակությունները, նախասիրությունը:
8. Որպես հոգեբանամանկավարժական մոտեցում՝ հայտնի մարդկանց կենսագրություններին անդրադառնալիս շեշտը դնել ոչ թե նրանց ծանր կյանքի, այլ դժվարությունների հաղթահարելի լինելու կամ կրթություն ստանալու և հետագայում շոշափելի հաջողությունների հասնելու համար ֆինանսական միջոցների որոշիչ չլինելու հանգամանքի վրա: Դա կօգնի սոցիալապես անապահով ընտանիք–

ների երեխաներին հաղթահարելու ընկճվածությունը և վառ պահելու սովորելու ցանկությունը:

9. Համագործակցել դպրոցի հոգեբանի հետ՝ երեխաների և նրանց ընտանիքների կարիքները գնահատելու, մասնագիտական, սոցիալ-մանկավարժական աջակցություն տրամադրելու նպատակով:

Հարկավոր է հնարավորինս չեզոքացնել գոյություն ունեցող երևույթի բացասական ազդեցությունը, որպեսզի սոցիալական անհավասարությունը չխանգարի ոչ մի երեխայի՝ ստանալու հնարավորինս որակյալ կրթություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն, Հոդված 38,ընդունված 06.12.2015 :
2. «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, հաստատված 20.07.2024 :
3. Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Հանրակրթական դպրոց-ներում բուլինգի առկայության վերաբերյալ հետազոտության արդյունքների վերլու-ծություն, Երեան, 2021, 51 էջ:
4. Ադամյան Հ, Խուդոյան Ա., Փափուկ հմտությունների զարգացումը՝ որպես բուլինգի կանխարգելման և հաղթահարման գործոն, Երևան, 2024, 97 էջ:
5. Ալեքսանյան Ա., Իվանյան Ա., Նիկողոսյան Ա., Կին և տղամարդ՝ տարբեր, բայց հավասար,Երևան, 2016 ,164 էջ:
6. Համբարձումյան Ա., Բուլինգը երևանյան դպրոցական միջավայրում,Երևան, 2021, 110 էջ:
7. Հայրապետյան Ս., Նազարյան Կ., Տոնոյան Ջ., Սոցիալական հավասարությունը և արդարությունը դպրոցում, Երևան, 2020, 102 էջ:
8. Միքայելյան Մ., Բռնության և զոհի հոգեբանություն, Երևան, 2016, 164 էջ:
9. Վանյան Ա., Հայրապետյան Ժ., Ինչպես դառնալ հաջողակ ու երջանիկ մարդ, Երևան, 2022, 136 էջ:
10. Ալեքսանյան Ա., Երեխաներն ու սթրեսը, Բունtv https://youtu.be/Zs3-lG0lu7A?si=pgUlHN-kBFZfUwHX (16.02.2025թ.):